ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0010, ք.Երևան, Կորյունի 15/1, Հեռ: (00 37410) 511-773, www.court.am

№ ԴԴ-3-Ե-1379

« 21 » փետրվարի 2023թ.

«ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Կ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ
«ՍՏԱՐՏԿՈՊԻ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Սույնով ծանուցվում է, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար տոներների և տոներային քարտրիջների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/06» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտերում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, մասնավորապես՝

«ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ

- էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարության (Հավելված N 1) 1-ին պարբերությունում գնման ընթացակարգը սխալ է նշված,
- դիմում-հայտարարության 2-րդ կետի 1-ին պարբերությամբ նախատեսված՝ գնման գործընթացի շրջանակում անբարեխիղճ մրցակցության, գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին հայտարարության մեջ բացակայում են «անբարեխիղճ մրցակցություն» բառերը:

«Ստարտկոպի» ՍՊԸ

- էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարության (Հավելված N 1) մեջ կազմակերպության գործունեության հասցեն թերի է լրացված, նշված չէ նաև էլեկտրոնային փոստի հասցեն,
- դիմում-հայտարարության 1-ին կետում նշված չէ մասնակցին փոխկապակցված անձանց «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/06» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանության մասին տեղեկատվությունը. անհրաժեշտ է «1) բավարարում է ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում» բառերը փոխարինել «1) Ստարտկոպի ՍՊԸ-ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/06» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և Ստարտկոպի ՍՊԸ-ն պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում» բառերով,
- դիմում-հայտարարության մեջ «ղեկավարի պաշտոնը, ղեկավարի անուն ազգանունը» դաշտում նշված չէ ղեկավարի պաշտոնը,

- 2-րդ, 3-րդ, 4-րդ, 7-րդ, 9-րդ չափաբաժինների մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրերում բացակայում է հրավերով նախատեսված՝ Վաճառողի՝ իր միջոցների հաշվին ապրանքների տեղափոխումն ու բեռնաթափումը Գնորդի պահեստ իրականացնելու և նախապես Գնորդի հետ մատակարարման կոնկրետ հասցեն համաձայնեցնելու պայմանը: Միաժամանակ 3-րդ, 4-րդ, 7-րդ, 9-րդ չափաբաժինների մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրերում հրավերով նախատեսված «Ապրանքները պետք է լինեն չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ» բառերը տվյալ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում կրկնվում են:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/06» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11 կետը՝ առաջարկվում է մինչև սույն թվականի **փետրվարի 22-ը ներառյալ** eauction.armeps.am համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնվում է, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում՝ հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ **ԱՐԵՆ ՄԵՍՐՈՊՅԱՆ**

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/06» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Ա. Հովհաննիսյան
Հեռ.՝ /+37410/ 511-774